ՔԱՂՎԱԾՔ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹԻՎ 01-2013 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

2013 թվականի ապրիլի 29-ին, ժամը 11:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, Ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց, 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էր «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հիմնադիր և միակ բաժնետեր Վարդան Սիրմաքեսը (11670 ձայնի իրավունքով):

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 11670) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:

Ժողովը նախագահում էր Վ. Սիրմաքեսը, իսկ ժողովի քարտուղարն էր Ա. Սելլեֆյանը:

ՕՐԱԿԱՐԳ

2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի շահույթը բաշխելու հարցը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի ընդհանուր ժողովը.

ՈՐՈՇԵՑ

<u>Երկրորդ հարցով</u> (զեկուցող՝ Ա. Սելլեֆյան)՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ֆինանսական տարվա 1,624,971,000 (մեկ միլիարդ վեց հարյուր քսանչորս միլիոն ինը հարյուր յոթանասունմեկ հազար) ՀՀ դրամ զուտ շահույթից 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը՝ դարձնելով այն 2,000,000,000 (երկու միլիարդ) ՀՀ դրամ, իսկ մնացած 1,124,971,000 (մեկ միլիարդ մեկ հարյուր քսանչորս միլիոն ինը հարյուր յոթանասունմեկ հազար) ՀՀ դրամը թողնել որպես չբաշխված շահույթ:

Որոշումն ընդունվեց միաձայն: Որոշումն ուժի մեջ է մտնում 2013թ. ապրիլի 29-ից:

Նիստին այլ հարցեր չքննարկվեցին:

Սույն արձանագրությունը կազմված է 29.04.2013թ.-ին, հայերեն լեզվով, երկու օրինակից, բաղկացած է 1 (մեկ) էջից:

Ժողովի նախագահ՝ /ստորագրություն/ Վ. Սիրմաքես

Ժողովի քարտուղար՝ /ստորագրություն/ Ա. Սելլեֆյան